ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկված ԳՊՀ գիտական պարբերականում տպագրության համար անհրաժեշտ է զեկուցումները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով **մինչև 2023 թվականի մայիսի 20-ը**՝ պահպանելով հետևյալ տեխնիկական պահանջները.

1. Գիտական զեկուցումը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, համակարգչային շարվածքով, B 5 չափի տպագրական թղթի վրա, **«GHEA Grapalat»** տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:

Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 pt տառաչափով (մեծատառերով, թավ՝ Bold), վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում 10,5 pt տառաչափով, նշել հոդվածի համընդհանուր տասնորդական դասակարգման կոդը (ՀՏԴ, UDC, УДК), այնուհետև հեղինակ(ներ)ի **ազգանունը, անունը** (թավ), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից), մեկ տող ներքև տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, մեկ տող բաց թողնելով՝ 10,5 pt տառաչափով, շեղատառ (italic) և թավ բնագրի լեզվով ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները, գիտական նորույթ պարունակող առաջարկությունները: Անգլերեն ամփոփագրի առկայությունը պարտադիր է, ընդ որում՝ 150-ից 250 բառի սահմաններում, եթե նյութն անգլերեն չէ:

2. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր.**» (թավ) և նշել բանալի բառերը:

3. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը, 10,5 pt տառաչափով, վերջում նշելով նաև խմբագրական խորհրդին ներկայացման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Մեջբերումներն անհրաժեշտ է կատարել համակարգչային հղման ձևով՝ զեկուցման համար հերթական համարակալմամբ (1-ից մինչև վերջին հղումը):

4. Զեկուցման վերջում 10,5 pt տառաչափով գրել հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, հեղինակ(ներ)ի էլեկտրոնային փոստի հասցեն, ամփոփագիրը և բանալի բառերը:

5. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները ներկայացնել նկարի տեսքով՝ 10,5 pt տառաչափով:

6. Անհրաժեշտ է ներկայացնել կարծիք՝ ներկայացվող գիտական զեկուցման մասին կամ համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:

Պահանջներին չհամապատասխանող զեկուցումները չեն ընդունվում:

Այն հեղինակները/համահեղինակները, ովքեր չեն հանդիսանում Գավառի պետական համալսարանի աշխատակիցներ, զեկուցման տպագրման համար վճարում են յուրաքանչյուր էջի հաշվարկով՝ 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ, իսկ ԳՊՀ ‹‹Գիտական հոդվածների ժողովածու››-ի տպագիր օրինակ ստանալու համար՝ ևս 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, փոխանցումը կատարելով ցանկացած բանկից՝ «ՎՏԲ Հայաստան» բանկ ՓԲԸ Կամո մ/ճ 16021100146800 հաշվեհամարին: Փոխանցումը հարկավոր է կատարել միայն ԳՊՀ գիտական պարբերականի խմբագրական խորհրդի կողմից հոդվածի ընդունումը հաստատելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ (0-60) 46-04-03, (0-60) 46-12-42, (0-60) 46-12-43:

Շնորհակալություն համագործակցության համար: